

ՓՈՒՆԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ


ք.Գավառ

«12» Նոյեմբեր 2014թ.

Նպատակ ունենալով բարձրացնել Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որակը, ապահովել դրանց շարունակականություն, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի բժշկական կազմակերպություններում չիրականացվող մասնագիտական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները բնակչությանը հասանելի դարձնել, «Էրեբունի» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ ի դեմս գործադիր տնօրեն Արթուր Ռոստոմյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և Գեղարքունիքի մարզպետարանը՝ ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Մևակ Խլիլայանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. Հաստատել արդյունավետ և բազմակողմանի համագործակցություն՝ սույն հուշագրով սահմանված նպատակների և խնդիրների իրագործման համար:
2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Էրեբունի» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ընտրված աշխատակիցների մասնակցությունը Գեղարքունիքի մարզի բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցմանը:
3. Երկկողմանի համաձայնեցված կերպով մշակել ժամանակացույց՝ Գեղարքունիքի մարզում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման միջոցառումներին «Էրեբունի» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ ընտրված աշխատակիցների մասնակցության համար:
4. Սույն Հուշագրով նախատեսված համագործակցությունը կազմակերպել առավելագույնս արդյունավետ՝ ելնելով Գեղարքունիքի մարզի բնակչությանը բարձրակարգ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատչելիությունը երաշխավորելու սկզբունքից:
5. Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:
6. Սույն Հուշագիրը հանդիսանում է Կողմերի մտադրություններն արտահայտող փաստաթուղթ:

«Էրեբունի» բժշկական կենտրոն» ՓԲԸ
գործադիր տնօրեն
Ա. Ռոստոմյանի



Գեղարքունիքի մարզպետարան
աշխատակազմի ղեկավար
Ս. Խլիլայան

